

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2003թ. հունվար-մարտին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1403.6 հազ. մարդ, որոնց 90.9%-ը կամ 1276.0 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.1%-ը կամ 127.6 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Ըստ գնահատման, զբաղված բնակչության 77.2%-ը զբաղված է եղել մասնավոր հատվածում, 22.4%-ը՝ պետական հատվածում և կառավարման համակարգում, իսկ 0.4%-ը՝ հասարակական և կրոնական կազմակերպություններում և հիմնադրամներում:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 29.6%-ի կամ 377.5 հազարի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է մոտ 9000 սուբյեկտներից՝ ամսական և եռամսյակային պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2003թ. հունվար-մարտին նշված սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 8.7%-ով:

2002թ. հունվար-դեկտեմբերին այս կազմակերպություններում աշխատողների շարժը բնութագրվում է հետևյալ կերպ. աշխատանքի ընդունվել են 53.3 հազ. մարդ, նրանցից 12.8 հազարը՝ նոր ստեղծված աշխատատեղերում, աշխատանքից դուրս են եկել 63.9 հազ. աշխատողներ, նրանցից 14.2 հազարը՝ ազատման կամ անձակազմի կրճատման հետ կապված, 37.0 հազարը՝ սեփական կամքով և 12.7 հազարը՝ այլ պատճառներով:

Աշխատողների շարժը 9000 կազմակերպություններում, ըստ տնտեսության ճյուղերի, 2002թ. հունվար-դեկտեմբերին

	Ընդունվել են աշխատողներ, հազ.մարդ	Նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի նկատմամբ,%	Ազատվել են աշխատողներ, հազ.մարդ	Նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի նկատմամբ,%
Ընդամենը ՀՀ	53.3	98.5	63.9	88.8
Արդյունաբերություն	16.2	82.2	22.4	70.4
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	1.5	51.7	1.5	53.6
Տրանսպորտ և կապ	2.5	71.4	6.4	128.0
Շինարարություն	15.9	154.4	13.4	130.1
Առևտուր, հանրային սնունդ	0.5	100.0	0.6	31.6
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղապասարկում	4.0	100.0	6.2	177.1
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	1.3	68.4	2.1	53.8
Կրթություն	5.5	98.2	4.5	84.9
Մշակույթ, արվեստ, գիտություն	1.5	83.3	3.1	119.2
Վարկավորում և ապահովագրություն	0.5	83.3	0.8	88.9
Կառավարման ապարատ	3.0	120.0	2.0	66.7
Այլ	0.9	112.5	0.9	90.0

Աշխատուժի շարժի ինտենսիվության գնահատման նպատակով հաշվարկվել է աշխատանքի ընդունվելու և աշխատանքից դուրս գալու շրջապտույտի գործակիցները, որոնք 2002թ. հունվար-դեկտեմբերին վերոհիշյալ սուբյեկտներում կազմել են, համապատասխանաբար, 14.7% և 17.6%, իսկ աշխատողների փոխարինման գործակիցը՝ - 2.9%:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Վերջինիս բացասական արժեքը վկայում է այն մասին, որ աշխատանքից ազատվածների թվաքանակը գերազանցում է աշխատանքի ընդունվածների թվաքանակին: Ընդ որում, աշխատանքից ազատվածների 57.8%-ն աշխատանքը թողել է սեփական կամքով, մասամբ համալրելով գործազուրկ բնակչության շարքերը: Այս երևույթի առկայությունն առավելապես պայմանավորված է տարիներ շարունակ հարկադիր վարչական արձակուրդում գտնվողների սեփական կամքով ազատմամբ՝ մի կողմից, մյուս կողմից էլ՝ աշխատանքի պայմանների և վարձատրության անբավարար մակարդակով:

2002թ. հունվար-դեկտեմբերին հարկադիր վարչական արձակուրդում գտնվողները կազմել են 25.1 հազ. մարդ: Այդ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 37.2%-ով:

2003թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 155.9 հազ.աշխատանք փնտրողներից 99.2%-ը կան 154.6 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 82.8%-ը կան 128.0 հազ.մարդ, նրանցից 7.7 հազարը եղել են գյուղական բնակավայրերում ապրողներ:

2003թ. տարեսկզբից գործազուրկի կարգավիճակ ստացել են 5.8 հազ. մարդ, այդ թվում 2.0 հազարը՝ մարտին, հաշվառումից հանվել են 5.2 հազ. մարդ, նրանցից՝ 26.2%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով, 0.2%-ը՝ վաղաժամկետ կենսաթոշակի ձևակերպման հետ կապված, մնացածը՝ այլ պատճառներով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹, 2003թ. մարտին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից՝ գործազուրկներ			
	ընդամենը, հազ. մարդ	նախորդ տարվա մարտի նկատմամբ,%	ընդամենը, հազ. մարդ	այդ թվում՝ կանայք	%ով՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ	
					ընդամենը	այդ թվում՝ կանայք
Ընդամենը	155.9	96.8	128.0	86.1	93.7	95.6
ք. Երևան	37.2	89.4	33.6	22.3	88.0	90.3
Արագածոտն	2.3	104.5	1.5	1.0	100.0	111.1
Արարատ	6.3	84.0	5.0	3.3	84.7	84.6
Արմավիր	8.5	95.5	5.8	3.4	89.2	91.9
Գեղարքունիք	8.9	101.1	6.5	4.0	98.5	95.2
Լոռի	26.7	107.7	22.0	14.5	104.3	105.1
Կոտայք	9.3	89.4	6.9	4.7	85.2	88.7
Շիրակ	32.5	96.4	27.4	21.1	94.2	97.7
Սյունիք	16.9	103.0	14.0	8.4	101.4	101.2
Վայոց Ձոր	2.2	104.8	1.7	1.2	100.0	100.0
Տավուշ	5.1	110.9	3.6	2.2	87.8	88.0

Գործազուրկ բնակչության մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում քաղաքային բնակչությունը՝ 94.0%, որի հիմնական մասը կենտրոնացած է Երևանում՝ 26.2%, Գյումրի քաղաքում՝ 19.7% և Վանաձորում՝ 11.4%-ը:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 67.3%-ը և նրանց տեսակարար կշիռը 2002թ. մարտի նկատմամբ ավելացել է 1.3%-ով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ սեռի, տարիքային և կրթական կազմի¹

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

2003թ. մարտի վերջի դրությամբ

	Գործազուրկների թվաքանակը, %-ով ընդամենի նկատմամբ	
	ընդամենը	կանայք
Ընդամենը գործազուրկներ	100	100
<i>այդ թվում.</i>		
մինչև 18 տարեկան	0.4	0.4
18-22	5.8	5.4
23-30	21.8	19.6
31-50	62.5	66.5
51 և բարձր	9.5	8.1
<i>կրթությամբ.</i>		
բարձրագույն	12.5	11.6
միջնակարգ մասնագիտական	25.0	23.8
ընդհանուր միջնակարգ	57.0	60.0
թերի միջնակարգ	5.5	4.6

Որոշակի փոփոխություն է նկատվել պաշտոնապես գրանցված գործազուրկների տարիքային և կրթական խմբերում: Այսպես, 2002թ. մարտի համեմատությամբ 2003թ. մարտին 0.3 տոկոսային կետով ավելացել է 23-30 տարեկան գործազուրկների տեսակարար կշիռը, փոխարենը՝ 0.2 տոկոսային կետով նվազել է 31-50 տարեկանների տեսակարար կշիռը: Աճի միտում է նկատվում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ գործազուրկների թվաքանակում. նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ այդ ցուցանիշն աճել է 0.2%-ով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ ունեցած մասնագիտության 2003թ. մարտի վերջի դրությամբ¹

	2003թ.	2002թ. մարտի նկատմամբ, %
Ընդամենը գործազուրկներ, մարդ	127955	93.7
Ծառայողներ, նրանցից՝		
ճարտարապետներ, ճարտարագետներ և հարակից մասնագետներ	6902	92.4
Ծրագրավորողներ	396	115.5
Իրավունքի բնագավառի մասնագետներ	255	98.5
Մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ	1786	97.8
Հասարակական և հարակից գիտությունների մասնագետներ	2608	86.9
Գյուղատնտեսական գիտությունների և առողջապահության մասնագետներ	4641	94.0
Գրականության և արվեստի գործիչներ	1183	87.8
Ձեռնարկատիրական գործունեության մասնագետներ	5423	89.0
Մանկավարժական այլ մասնագիտություններ	3217	94.3
Այլ մասնագիտություն ունեցողներ	18473	93.2
Բանվորներ, նրանցից՝		
Վարորդներ	4831	93.0
Վաճառողներ	4435	94.1
Առաքիչներ	574	99.5
Օպերատորներ	1450	96.3
Բանվորական այլ մասնագիտություն ունեցողներ	35076	69.9
Մասնագիտություն չունեցողներ	36705	141.9

Աշխատանք փնտրողների 64.7%-ը կազմել են կանայք, առաջին անգամ աշխատանք փնտրողները կազմել են չզբաղված քաղաքացիների 13.8%-ը:


¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2003թ. տարեսկզբից աշխատանքի տեղավորվել է 1552 մարդ, այդ թվում 87.9%-ը՝ գործազուրկներ: 2003թ. մարտին աշխատանքի տեղավորված գործազուրկների 4.7%-ի գործազրկության տևողությունը կազմել է 1-3 ամիս, 8.0%-ինը՝ 3-6 ամիս, 14.1%-ինը՝ 6-12 ամիս, 73.2%-ինը՝ 12 ամիս և ավելի, իսկ աշխատանքի տեղավորման միջին տևողությունը (գործազուրկի կարգավիճակ ստանալու պահից մինչև աշխատանքի տեղավորման պահը) կազմել է 14.9 ամիս, կանանցը՝ 15 ամիս:

2003թ. մարտին մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 190 չգրադված մարդ:

Աշխատուժի առաջարկն ու պահանջարկը 2003թ. մարտին¹ (հազ.մարդ)



Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների, 2003թ մարտին¹

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	այդ թվում՝ ամսվա վերջի դրությամբ
Ազատ աշխատատեղեր	1033	815
Ծառայողներ, ընդամենը	228	211
տնտեսագետներ	14	13
ինժեներներ	15	14
բժիշկներ	26	26
մանկավարժներ	18	15
իրավաբաններ	1	-
այլ մասնագետներ	154	143
Բանվորներ, ընդամենը	804	604
խառատներ	25	19
փականագործներ	54	32
մեխանիկներ	1	-
էլեկտրիկներ	24	5
վարորդներ	57	47
եռակցողներ	44	28
կարողներ, մանողներ, գործողներ, ջուլիակներ	249	241
բանվորական այլ մասնագիտություններ	221	133
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	129	99


2003թ. մարտին գործազրկության միջին տևողությունը կազմել է 15.4 ամիս և 2002թ. մարտի նկատմամբ նվազել է 0.1 ամսով:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ մարզերում աշխատանք փնտրողներից աշխատանքի տեղավորվածների տեսակարար կշիռը տատանվել է 0.2%-ից (Արմավիրի մարզ) մինչև 2.2% (ք.Երևան) սահմաններում: Այդ ցուցանիշի տատանումն ըստ մարզերի, գրաֆիկորեն պատկերված է ստորև.

(%-ով՝ աշխատանք փնտրողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ)



Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. մարտին հանրապետությունում կազմել է 6.9 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3127 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. մարտին կազմել է 9.1% և 2003թ. փետրվարի համեմատ մնացել է նույն մակարդակին, իսկ 2002թ. մարտի նկատմամբ նվազել 0.1 տոկոսային կետով: